



Ազդարարության Trumpet's Sound փող

50-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԿԱՆ
ՆՈՅԵՄԲԵՐ - ՌԵԿՏԵՄԲԵՐ 2019

«Որովհետև փողը կհնչի,
մեռելները հարություն
կառնեն առանց
ապականության,
և մենք կփոխվենք»:

Ա Կորնթ. 15:52





Հայ Ավելարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBridge,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՌԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերքը Սիդնեյի Հայ Ավելարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույնեցյան:

Այս թերքը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցենով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Զարեսու	Հովիվ՝ Հրաչ Գույնեցյան
Ղովտը Սոդոմում	Դուն Մթորմըր
Երիտասարդ Դավիթը՝ որպես հովիվ.	Մանկանց ավետ. ընկ.
Ինչո՞ւ սպասել	Վեր.՝ Հովսեփ Հովսեփիյան
«Ո՛չ զորությամբ. ո՛չ ել ուժով, այլ իմ Հոգով».....	Հովիվ՝ Հրաչ Գույնեցյան
Խոնարհ սկիզբը	Հովիվ՝ Հրաչ Գույնեցյան
Ինչո՞ւ ես ուշանում.	Քաղված
Աստծո տված պարգևները (2).....	Ուերս Տիրուակ
Կյանքիդ ճանապարհի ընտրությունը. Աե՞ղ, թե՞ լավնՎեր.՝ Դավիթ Դոկտորյան	
Աստվածահաճո կանայք	Ուոքերտ Հոլոու

Զաքեոս

Դուկաս 19:1-10

 արկահավաք Զաքեոսի պատմությունը հիանալի է: Այս հարուստ և կարճահասակ մարդը մաքսապետ էր, միշտ մեծահարուստի պես էր հազմվում, հպարտորեն քայլում էր, բայց ոչ ոքի կողմից սիրված չէր: Ոչ ոք չէր հավանում հարկային դաշտում աշխատողին: Նա ընկերներ չուներ:

Հիսուսն անցնում էր Երիքովով: Զաքեոսը լսել էր Հիսուսի, Նրա ուսմունքի ու հրաշքների մասին: Նա միշտ փափագել էր տեսնել Նրան: Զաքեոսը կարճահասակ էր. եթե ամբոխի մեջ մնար, չէր կարողանա տեսնել Հիսուսին: Բայց Զաքեոսը վճռական էր Հիսուսին տեսնելու հարցում: Նա արհամարհեց իր հպարտությունը և չանհանգստացավ իր շքեղ հագուստի կամ իրեն ծաղրող երեխաների համար: Քանի որ իր միակ փափագը Հիսուսին տեսնելն էր, նա վագեց ու մի ժանտաքենու վրա բարձրացավ, որպեսզի տեսնի Նրան: Կարող ենք պատկերացնել՝ գուցե վախեցավ ծաղից ընկնելուց կամ գուցե ամուր գրկեց ճյուղը՝ սպասելով այդ հատուկ պահին:

Եվ ահա Նա: Հավաքված ամբոխը ցնծության ձայներ արձակեց, երբ Հիսուսը հորիզոնում տեսանելի եղավ բոլորին: Զաքեոսը շատ ո-գլուրված էր: Նա իր գլուխը բարձրացրեց, որպեսզի Հիսուսին տեսնելու առիթը հանկարծ բաց չըռողնի: Նա զգիտեր, որ Հիսուսը ճանաչում էր իրեն: Հիսուսը վեր նայեց ու ասաց, որ անմիջապես իջնի, քանի որ այդ օրը պետք է նրա տանը մնար: Ուստի Զաքեոսը անմիջապես ծաղից իջավ և ուրախությամբ ողջունեց Տիրոջը:

Ես սիրում եմ այս պատմությունը, քանի որ Հիսուսի կարիքը ունեցող մեղավոր մարդու փրկության պատմություն է: Աստվածաշունչն ասում է. «Փնտրե՛ք, և պիտի գտնե՛ք»: Զաքեոսն իր ամբողջ սրսով փնտրում էր: Այս պատմության զարմանալի մասն այն է, որ Հիսուսը նրան իր անունով կանչեց: Այո՛, Հիսուսը գիտի նաև Ձեր անունը, բայց Դուք պետք է գաք Իր մոտ՝ մի կողմ դնելով ձեր հպարտությու-

նը: Վազե՛ք Նրա մոտ, ինչպես Զաքեոսն արեց, և ասե՛ք. «Տե՛ր, ես պարզապես ուզում եմ Ձեզ տեսնել»:

Սիրող Տերն ուզում է Ձեր սրտում բնակվել, որպեսզի Ձեզ հետ տոնակատարություն կատարի: Գիտե՞ք, թե Տերն ինչ ասաց Զաքեոսին: Նա ասաց. «Այսօր այս տաճը փրկություն եղավ, քանի որ սա էլ Աբրահամի որդի է: Որովհետև Մարդու Որդին եկավ, որ կորածին փնտրի ու փրկի»:

Այո՛, Հիսուսն այսօր ներկա է Ձեզ համար, և սա ձեր հնարավորությունն է Իրեն ասելու. «Տե՛ր, որպես մեղավոր գալիս եմ և ուզում եմ Ձեզ ունենալ կյանքիս մեջ»:

Թո՞ղ Աստված օրինի ձեզ:

Հ. Գ.



«Քանզի մեզ համար մի մանուկ ծնվեց, մեզ մի որդի տրվեց.

և իշխանությունը նրա ուսերի վրա է լինելու. և նրա անունը

կոչվելու է Սքանչելի, Խորիրդական, Հզոր Աստված,

Հավիտենական Հայր, Խաղաղության Իշխան:

Նրա կառավարության և խաղաղության աճին վերջ չի լինելու,

Դավթի աթոռի վրա և Նրա թագավորության վրա, որ այն

հաստատի ու ամրապնդի իրավունքով և արդարությամբ

այժմվաճից մինչև հավիտյան: Զորաց Տիրոջ նախան-

ձախնդրությունն իրագործելու է դա»:

Եսայի 9:6-7

Ղովտը Սոդոմում

Կարդացե՛ք Ծննդոց 19-րդ գլուխը

Ի բ երկրորդ նամակում (2:7-8) Պետրոսը Ղովտին մեր չակնկալած ձևով է նկարագրում. նա նրա մասին խոսում է որպես արդար մարդու մասին: Սորոնացիների շրջապատում ապրելով՝ Ղովտը ճռնշվում էր նրանց անառակ վարմունքից: Նրա արդար հոգին տանջվում էր՝ օրեցօր տեսնելով ու լսելով նրանց անօրեն վարմունքը: Եթե Պետրոսը չգրեր սրա մասին, մենք երբեք չէինք իմանա, որ Ղովտը արդար մարդ էր: Ի՞նչ էր պատահել այն մարդուն, ով Աքրահամի ընկերությունը վայելելու առանձնաշնորհումն ուներ: Ինչո՞ւ նա, ով այս քան բարձր դիրք էր զբաղեցնում, նստել էր Սորոնի նման չար քաղաքի շեմին:

Ղովտը հանրային կյանքում

Աքրահամին այցելած երկու հրեշտակները երեկոյան ժամանեցին Սորոն ու տեսան, որ Ղովտը նստած է քաղաքի շեմին: Նա պատվավոր դիրք էր զրավել քաղաքում: Տարիներ առաջ, երբ Աքրահամն ու Ղովտը իրենց հոտերի և արջառների շատության պատճառվ պետք է իրարից բաժանվեին, Աքրահամը Ղովտին առաջարկեց առաջինը լնտրել երկիրը: Ղովտը դաշտի քաղաքները նայեց և իր վրանը Սորոնի մոտ բացեց: Շատ չանցած՝ նա բնակվեց Սորոնում և հայտնվեց Արևելքի չորս քառակողմների կողմից գերեվարված խմբում: Աքրահամի շնորհիվ փրկվելուց հետո նա կրկին վերադարձավ Սորոն և քաղաքում անվանի մարդու անուն վաստակեց՝ դառնալով քաղաքի առաջնորդներից մեկը՝ մարդ, ով նստում է քաղաքի շեմին՝ օգնելով կարգավորելու բնակչության քաղաքական, դատական և առևտրային գործերը: Նա այնքան էր սիրել քաղաքը, որ նույնիսկ գերության տարվելը չստիպեց իրեն լքել այն ու վերադառնալ իր նախկին կյանքին:

Երբ հրեշտակները հասան Սորոնի դարպասների մոտ, Ղովտն առեց այն, ինչ Աքրահամն էր արել այդ օրը վաղ առավոտյան: Նա վեր կացավ նրանց դիմավորելու ու իր երեսը մինչև գետին իջեցնելով՝ խոնարհվեց՝ խնդրելով, որ այդ գիշեր իր տանը մնան: Ակզրում

Նրանք մերժեցին առաջարկը՝ ասելով, թե ամբողջ գիշեր փողոցում կմնան: Սակայն հետո թեև ընդունեցին ‘Նովտի հյուրընկալության առաջարկը, Արքահամի հյուրընկալության պես չընդունեցին այդ: Այնուամենայնիվ, նախքան գիշերը անկողին մտնելը Սոդոմի բոլոր տարիքի տղամարդիկ կանչեցին ‘Նովտին՝ պահանջելով սեռական հարաբերություն ունենալ հյուրերի հետ:

Հավանաբար ‘Նովտի’ քաղաքային գործերում ներգրավվելու որոշումը Սոդոմի հոգևոր կյանքը բարելավվելու փափագով էր պայմանավորված: Եթե այդ գիշեր նրա տան շուրջը անկարգություններ սկսվեցին, նա սոդոմացիներին ասաց, թե հյուրերին իր հարկի շորի տակ առնելու պատճառը նրանց չարիքից փրկելն էր: Նա գիտեր, թե ինչպիսին են Սոդոմի տղամարդիկ: Ի պատասխան՝ Սոդոմի տղամարդիկ պնդեցին, որ ‘Նովտը որպես պանդուստ է եկել իրենց քաղաք, իսկ իհմա իրեն դատավորի տեղ է դնում: Նրանք իրենց պահվածքը փոխելու մտադրություն չունեին: Նրանց նպատակից շեղող ոչ մի արգելք չկար, եթե իրեշտակները չմիջամտեին ու կուրությամբ չհարվածեին նրանց: Բայց ‘Նովտն ինքն իրեն արհամարհված զգաց: Նա քաղաքի տղամարդկանց առաջարկեց իր աղջիկներին՝ փորձելով կանխել ավելի անբարոյական արարքը:

‘Նովտի’ տան մոտ կատարված իրադարձությունները համոզիչ պատճառ էին իրեշտակների հետագա քայլերի համար: Տերը Արքահամին ասել էր, որ Ինքը իշնելու է՝ տեսնելու, թե Իրեն եկած աղաղակի պես արեցի՞ն, թե՞ ոչ: Հրեշտակները ուղարկված էին այս հետախուզությունը կատարելու համար: Այդ պահին դատավճիռը հաստատ դարձավ: Նրանք ‘Նովտին նախազգուշացրին, որ իր հետ կապ ունեցող որևէ մեկին կարող է քաղաքից հեռացնել: Նրա փեսաների պատասխանը ծաղրող անհավատությունն էր:

Իրավիճակը, որի մեջ ‘Նովտը հայտնվեց, հիշեցնում է մեզ, որ մեր անձերին հարցնենք, թե արդյոք մեր համայնքի գործունեության մեջ Տիրոջը հավատարիմ վկայություն ունե՞նք: Իր փեսաների աշքին ‘Նովտը կատակող երևաց: Սա ենարադրում է, որ նա իր ապրելակերպի մեջ այնքան նման էր իր շրջապատի մարդկանց, որ եթե վտանգի մասին նախազգուշացրեց, նրանք իր խոսքերը լուրջ չընդունեցին:

Աշխարհայնության խնդիրը

Մենք առաջարկեցինք այն միտքը, որ Ղովտը փափագում էր Սուդոմը ապրելու ավելի լավ վայր դարձնել: Բայց դժվար էր աշխարհայնության գայթակղությունից խուսափելը: Ղովտը հրաժարվեց լեռների խստակյաց կյանքից՝ ընտրելով դաշտերի հաճելի արոտավայրերը: Նա քաղաք մտավ ավելի կարգավորված ու բարգավաճ կյանքի մարմաջով: Աշխարհը գրավեց նրան ու նրա ընտանիքին: Իսկ եթե հարցնենք, թե ի՞նչ նկատի ունենք աշխարհ ասելով, ապա պատասխանը հետևյալը կլինի. այն ամենը, ինչ խանգարում է Աստծո ընկերակցությանը և Նրան հնազանդվելուն, աշխարհային է: Աշխարհայնության որոշ հայեցակարգեր ինքնին կարող են սխալ չլինել, բայց դրանք խանգարում են Աստծո հետ մեր ընկերակցությանը և հնազանդությանը:

Սողոմի մոտ գտնվելը լուրջ խնդիր էր Ղովտի ընտանիքի համար: Հրեշտակները հորդորեցին նրան ընտանիքի հետ հնարավորինս արագ հեռանալ այստեղից: Նրանք նույնիսկ ստիպված էին բռնել Ղովտի, նրա կնոջ և երկու դուստրերի ձեռքերը՝ նրանց քաղաքից դուրս հանելու և ճանապարհի վրա դնելու համար: Նրանց սրտերը Սողոմում էին, և ուստի դժկամությամբ հեռացան: Նրանց դուրս հանելուց հետո հրեշտակներից մեկն ասաց Ղովտին, որ պետք է փախչի դեպի լեռները և դաշտում չմնա: Ամեն ինչ պետք է բռնի՛ նույնիսկ շատեր է հետ նայեին: Այնուամենայնիվ, Ղովտը խնդրեց, որ իրեն թոյլ տրվի դաշտում գտնվող փոքր քաղաք Սեգովի գնալ, քանի որ վախենում էր, որ լեռան վրա գուցե չարիքի հանդիպի: Նա հասկացողություն և հավատք չուներ, որ Աստված կարող էր իրեն պաշտպանել, եթե ինքը գնար այնտեղ, որտեղ Աստված էր ընտրել իր համար: Տեսնում ենք, թե ոքքան թերի է Ղովտի հավատքն ու հասկացողությունը: Նա խնդրեց Սեգովիում մնալ, սակայն շատ շանցած՝ վախեցավ այնտեղ մնալուց և երկար ժամանակ բնակվեց լեռների քարանձավներում:

Ղովտի պատմության ավարտը չափազանց տխուր է: Նյութական տեսանկյունից նա ամեն բան կորցրեց: Չնայած նրան թոյլ տրվեց Սեգովի գնալ, բայց նա վախեցավ այնտեղ ապրելուց: Սողոմում տուն

և հարստություն ուներ, քայց երբ Սեգովիից հեռացավ, ստիպված քարանձավում բնակվեց: Սակայն քարոյական վճար շատ ավելի ողբերգական էր, քան նյութականը: Նրա երկու դրույթերը որոշեցին իրենց հորը հարթեցնել, որպեսզի կարողանան օգտագործել նրան հղիանալու համար: Արդյունքում՝ երկու ազգ առաջացավ՝ մովաբացիները և ամմնացիները, որոնք խրայելացիների համար մշտապես մարմնի մեջ խրված փշի պես էին:

Դատավճիռ

Սողոմի կործանումը հանդիսավոր հիշեցում է, որ Աստված արդար դատավոր է: Աքրահամը թերևս անհանգստացած էր. արդյո՞ք ամբողջ երկրի Դատավորը արդարություն չի գործի: Նա իրավիճակին էր նայում մարդկային սահմանափակ տեսանկյունից: Նա մտածում էր իր եղբորորդու մասին և ուզում էր ազատել նրան վերահաս կործանումից: Աստված Ղովտին փրկելու միջոց պատրաստեց, և երբ Ղովտի հարցը լուծվեց, քաղաքի մեղքը պատժվեց, և Աստված կատարեց Իր դատավճիռը: Ապագայում Աստված կրկին թափելու է Իր քարկությունը ապստամբ մարդկության վրա: Այդ գործընթացում ամբողջ երկրի Դատավորը անշուշտ արդարությամբ է գործելու:

Քաջալերանը

Այնուամենայնիվ, կա քաջալերական մի կարևոր խոսք: Դաշտի քաղաքները կործանելուց առաջ Աքրահամը Աստծուց աղաչեց Սողոմում և Գոմորում ապրող արդարների կյանքի համար: Կործանման առավոտյան Աքրահամը երկրին նայեց և տեսավ, որ ահա այն երկրից հնոցի ծխի պես ծուխ էր քարձրանում: Եթե Աստված կործանեց այս քաղաքները, Նա Աքրահամին հիշեց: Աքրահամի աղոքքը, հնարիավոր է, իր ուզած ձևով չպատասխանվեց, քայց Աստված գիտեր Աքրահամի իրական մտահոգությունը և Ղովտին փրկեց ավերումից: Այսօր նույնպես այդպես է. «Այսպես էլ Հոգին օգնում է մեր տկառություններին, որովհետև մենք չգիտենք, թե ինչի համար և ինչպես պետք է աղոթենք, քայց Ինքը՝ Հոգին, անարտասանելի հեծեծանքով քարեխոսում է մեզ համար» (Հոռմ. 8:26):

Դռն Սթորմը

Երիտասարդ Դավիթը՝ որպես հովիվ

Հոգևոր աճի սերտողաշար մանուկների և պատանիների հետ աշխատողների համար

«Նաև Իր Դավիթ ծառային ընտրեց ու վերցրեց նրան ոչխարների փարախներից, նորածին գանձուկ ունեցող մաքիներին հետևողին բերեց, որ հովվի Իր Հակոբ ժողովրդին ու Իր ժառանգությանը՝ Խորայելին: Նա էլ հովվեց նրանց իր սրտի ազնվությամբ ու Իր ձեռքերի հմտությամբ առաջնորդեց նրանց» (Սաղ. 78:70-72):

Դավիթին ոչ դյուրին առաջադրանք էր տրվել: Դա նշանակում էր տնից հեռու լինել ու տոկալ դժվարություններին ու անհարմարություններին: Դա նաև նրան բաժանում էր մարդկանցից, հատկապես իր հասակակիցներից: Բայց նա իր գործը լավ էր անում:

Կարդում ենք, որ նա ոչխարներն էր արածեցնում (Ա Թագ. 16:11): Այս մի քանի քառն իրենից ողջ օրը կատարվող մեծ աշխատանք ու շատ զրհարերություն է ներկայացնում: Նա նաև ոչխարներին պաշտպանում էր առյուծներից ու արջերից, որոնք հարձակվում, ու շատ հնարավոր է, որ փախցնեին նրանց (Ա Թագ. 17:34-35): Դեռահասի համար սա շատ լարված պատասխանատվություն էր:

Նա մեկ ուրիշին էր կարգում հոր ոչխարներն արածեցնելու համար, երբ հայրը նրան այլ գործ էր հանձնարարում (Ա Թագ. 17:20): Շատ պատահներ սա կհամարեին պատասխանատվությունից ազատում, բայց ոչ Դավիթը, քանի որ նա ոչխարներին երբեք առանց հովվի չէր քողնի:

Այսպիսով, Դավիթը հովվի իր պարտականություններն օրինակելի ձևով էր կատարում: Ու շատ ճշմարիտ է, որ եթե անձը չի հոժարում ներգրավվել ծառայական թվացող գործի մեջ, ապա նա պատրաստ չէ ներգրավվելու ավելի կարևոր գործի մեջ՝ առավել մեծ պատասխանատվությամբ: Հովվության այդ տարիները լինելու էին նրա կյանքի ամենաօգտակար ու բեղուն տարիները, որոնց ընթացքում նա

սկսեց գնահատել Աստծո ստեղծագործության իրաշքն ու գեղեցկությունը:

Նրան դուր էր գալիս մենակության անդրբն ու խաղաղությունը:

Նա քնար նվագել սովորեց:

Այդ վաղ տարիներին ինչ-որ պահի նա վստահեց Աստծո փրկությանը. «Քանի որ Դու ես իմ հույսը, ո՞վ Տեր Աստված. մանկությունիցս ի վեր Դու ես իմ վստահությունը» (Սաղ. 71:5): Նա ժամերով Աստծո հետ էր հաղորդակցվում:

Դժվարին իրավիճակներում, օրինակ՝ վայրի կենդանիներին դեմ հանդիման լինել, նա սովորեց Աստծուն վստահելու անհրաժեշտությունը:

Նա երկար ժամանակ էր անցկացնում երգելով ու պարսատիկ կրակելով: Այդ տարիները նրան նախապատրաստեցին գրելու ու կռվելու համար, որ գալիքն էին:

Ոչխարներին առաջնորդելու և կերակրելու նրա փորձառությունը հետագայում օգնելու էին նրան իր ժողովրդին առաջնորդելու և կերակրելու հարցում:

Այս ամենն ամրապնդելու էին նրա դիրքերը, երբ նա դառնար իր երկրի առաջնորդը:

Պետք է ինքներս մեզ հարց տանք, թե արդյոք նույնքան բարեխի՞նք ենք, երբ մեր ծառայությանն ենք պատրաստվում:

Մանկանց ավետարանչության ընկերակցություն

C Առինավորում ենք մեր ընթերցողներին Տեր Հիսուս Քրիստոսի ծննդյան կապակցությամբ և մաղթում, որ 2020 թ.-ը օրինակ տարի լինի բոլորիդ համար: Նաև փափագում ենք, որ գալիք տարին լինի Տեր Հիսուսի երկրորդ գալստյան տարին:

Ինչո՞ւ սպասել

Գործք 22-րդ գլուխ

Եթե ուզում ես հեշտ գործը բարդացնել, շարունակիր հետաձգել այն: Ինչո՞ւ: որովհետև հեշտ բանը դառնում է դժվար, եթե հետաձգում ես այն, իսկ դժվար բանը հետաձգելը գրեթե անհնարին է դարձնում նրա իրազգործումը:

Կան մարդիկ, ովքեր անկախ իրենց զբաղվածությունից և անհնարին թվացող գործից, կարողանում են ժամանակ գտնել և այդ լրացուցիչ գործն էլ անել: Սիևնույն ժամանակ կան մարդիկ, ովքեր հետաձգում են գործերը, եթե նույնիսկ անելու ոչինչ չունեն: «Հետո կանեմ», «Իհարկե կանեմ, քայց հետո», - հետաձգել սիրող մարդիկ սովորաբար այսպիս են ասում: Հավանաբար լսել եք այս ասույթը.

«««Հետաձգելն իմ մեղքն է»».

Այն ինձ դառնություն, ցավ է պատճառում:

Ես գիտեմ՝ հետաձգելուն վերջ տալ է պեսը.

Սակայն դա ես վաղվանից եմ անելու»:

Գործք 22-րդ գլխում, եթե Պողոս առաքյալն իր վկայությունը տվեց առաջնորդին ու բազմությանը, նա պատմեց, որ եթե Հիսուսը հայտնըվել էր, ինքը նրան հարցրել էր. «Ի՞նչ պետք է անեմ, Տե՛ր»: Եվ Հիսուսը պատասխանել էր. «Վեր կաց ու զմա՞ Դամակոս, այնտեղ քեզ կասվի, թե ինչ անես»: Պողոսը չհետաձգեց, նա իսկույն հնագանդվեց:

Անանիա անունով մի մարդ եկավ Պողոսի մոտ, եթե նրա տեսողությունն արդեն վերականգնվել էր, և ասաց.

«Նրա համար վկա կլինես բոլոր մարդկանց առաջ այն բաների համար, որ տեսար և լսեցիր, և հիմա ինչո՞ւ ես ուշանում, վեր կաց, մկրտվի՛ր և քո մեղքերը լվա՝ Տիրոջ անունը կանչելով» (Գործք 22: 15-16):

Ինչո՞ւ են մարդիկ հետաձգում Հիսուսին մոտենալը և Նրա ներումն ու օրինությունն ստանալը: Ոմանք չեն ուզում թողնել այն ամենը, ինչ պետք է թողնեն, մտածում են. «Մի քիչ էլ կսպասեմ, հետո կընդունեմ Հիսուսին»՝ չգիտակցելով, որ ոչ մեկի կյանքը ապահովագրված չէ: Կան մարդիկ, ովքեր հենց այնպես հետաձգում են իրենց անելիքը: Նրանք հետաձգում են Քրիստոսին իրենց կյանքի մեջ ընդունելն ու Աստծո հետ հաշտվելը: Շատերը կարծում են, թե չեն կարող Աստծուն մոտենալ, քանի որ իրենք վատն են ու մեղավոր: Նախ պետք է մաքրվեն, բայց քանի որ չեն կարողանում, սպասում են: Կան մարդիկ էլ, ովքեր կարծում են, թե դեռևս չեն փորձել Աստծո մոտ տանող մյուս բոլոր ճանապարհները, ուստի սպասում են:

Գուցե դու հետաձգես ուաղիունդունիչ կամ ավտոմեքենա գնելը, տունը նորոգելը կամ դպրոց գնան այն պատճառով, որ չես կողմնորշվել գույնի, չափի կամ նույնիսկ դրա անհրաժեշտության հարցելում: Բայց ինչպե՞ս կարելի է հետաձգել Աստծո հետ հաշտվելը: Ինչպե՞ս կարող ես հետաձգել մերքերդ խոստովանելն ու Աստծուց ներում խնդրելը:

Եթե դեպի Աստված տանող ճանապարհները շատ լինեին, կարող էիր սպասել ու փորձել բոլորը, բայց Աստծո մոտ տանող ճանապարհներ չկան, կա միայն մեկ ճանապարհ.

«Հիսուսը նրան ասաց. «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը, ոչ ոք Հոր մոտ չի գա, եթե ոչ ինձանով»» (Հովհ. 14:6):

Դու արդեն գտե՞լ ես Հիսուսին, հաշտվե՞լ ես Աստծո հետ:

Քաղվածք՝ «Աստծո արհեստանոցը» գրքից
Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

* * *

«Ես իմ սիրեցյալինն եմ, և իմ սիրեցյալն իմն է.
Ճա շուշանների մեջ է արածեցնում» (Երգ Երգոց 6:3):

«Ո՛չ գորությամբ. ո՛չ էլ ուժով, այլ իմ Հոգով»

«Ազգարարութեան փող» թերթի 50-ամեակը



Ինչպիսի՝ ուրախություն է լինել այս սքանչելի ամսագրի կենսագործյան ականատեսը:

Մոտավորապես 15 տարի է, ինչ այս ամսագրի հիմնադիր-խմբագիրը գնացել է՝ Տիրոջ ներկայության մեջ լինելու, սակայն իր աղոքըների և Աստծո կամքի շնորհիվ գործը զարմանալի կերպով շարունակվում է:

Այսօր ամսագիրը տպագրվում է 4600 օրինակով ու տարածվում շուրջ

7 երկրներում 3 լեզուներով՝ արևելահայերեն, արևմտահայերեն և անգլերեն: Այն հասանելի է նաև առցանց՝ մեր կայքէջի միջոցով (www.acmaust.org): «Ազգարարության փող»-ը ազատորեն բաժանվում է Հայաստանի և Արցախի ավելի քան 50 եկեղեցիներում: Անգլերեն ամսագիրը կազմված է չորս U4 էջից, իսկ հայերեն տարբերակն ունի երկու լրացուցիչ էջ՝ մեջտեղը ունենալով նաև Աստվածաշնչի սերտողության բերթիկ, որը կարելի է ամսագրից հանել ու առանձին պահել:

Ովքե՞ն են ներգրավված այս գործում և ո՞ւմ պետք է շնորհակալություն հայտնել: Այս առիթից օգտվելով՝ ուզում ենք մեր շնորհակալությունը հայտնել բոլոր նրանց, որքեր քրտնաշան աշխատում են այս ծառայության համար հոդվածներ գրելով, թարգմանելով, սրբագրելով, տպագրելով, տարածելու մեջ մեզ օգնելով կամ նյութապես օժանդակելով:

Հայ քրիստոնեական միսիոներություն. այս առաքելությունը հովանավորում է ֆինանսական ծախսերը՝ հոգալով դրանց հետ կապված որևէ պակասության մասին:

Խմբագիր. Իռվիվ Հրաչ Գույուճյանը վերահսկում է ամբողջ աշխատանքը:

Հայերեն ամսագիր. Վարդան Եղբայր Սարգսյանը կանգնած է այս ամսագրի թիկունքին՝ նվիրելով իր ժամանակը թարգմանության, էջաղորման, ձևավորման և թերթը ժամանակին տպագրատուն հասցնելու համար:

Հայերեն ամսագրի սրբագրիչներ. Չնորհակալ Ենք արևելահայերեն թերթի համար Իդա Խաչատրյանի, իսկ արևմտահայերեն թերթի համար Վերժին Սարգսյանի կատարած աշխատանքների համար:

Անգլերեն ամսագիր. այս աշխատանքը անհնար կլիներ առանց Դուն և Հելեն Սրորմըրների օգնության: Մենք իհացած ենք նրանց նվիրվածությամբ:

Հռվիվ Արքո Գույուճյանը
Աստվածածնի սկզբողության խմբի հետ 1968թ.-ին
նավով Ավստրալիա գաղթելու
ժամանակ:



Աստվածաշնչի սերտողության դասընթացներ. Հնորհակալություն ենք հայտնում «Queensland mailbox club inc.»-ին՝ Աստվածաշնչի սերտողության իրենց դասընթացներն օգտագործելու թույլտվության համար:

Տպագրություն Սիդնեյում. Հնորհակալություն ենք հայտնում «Industrial Printing Co.»-ին վերջին չորս տարիների ընթացքում Սիդնեյում «Ազգարարության փող» թերթի տպագրության ծախսերն իր վրա վերցնելու համար:

Հողվածագիրներ. Օրինակած ենք հողվածագիրներով՝ հավատարիմ հավատացյալ հեղինակներով, Խոսքի հովիվներով և ուսուցիչներով, ովքեր իրենց ժամանակը նվիրում են Աստծո Խոսքը, աստվածաշրնչյան վարդապետությունը, վկայությունները, հույսի և քաջալերական խոսքերը թերելով մեզ՝ ամսագիրը դարձնելով չփրկվածների համար լույս և փրկվածների համար՝ հոգևոր սնունդ և սպեղանի:

Քաշխում (Հայաստան և Արցախ). Հնորհակալ ենք Մարտուն Հարությունյան եղբորը Հայաստանում և Արցախում ամսագիրը տարածելու համար:

Փոստով բաշխում (Ավստրալիա). Երախտապարտ ենք Զորջ և Արշիկ Մոմարթիններին, ովքեր օգնում են մեզ՝ ամսագիրը աշխարհի 6 երկրներ՝ Ավստրալիա, ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, Բուլղարիա, Հարավային Ամերիկա, փոստով ուղարկելու գործում:

Մեր կոչումը ազդարարության փողը հնարավորինս բարձր ու երկար հնչեցնելու է: Մենք ուզում ենք պատրաստ լինել Նրա վերադարձին ու փափագում ենք, որ մեր բոլոր ընթերցողները միանան մեր խըմբին, մինչ անհամբերությամբ սպասում ենք հափշտակությանը: Թո՞ղ Տերն օրինի բոլորիդ:

Եթե մեր հավատարիմ ընթերցողներից մեկն եք, ապա խնդրում ենք պատմել մեզ, թե տարիների ընթացքում ինչպես է թերթը օրինություն դարձել Ձեզ համար:

Հ. Գ.

Խոնարհ սկիզբը


Այօր ինձ համար մեծ պատիվ ու առանձնաշնորհում է «Ազգարարության փող» թերքի 50-ամյակի կապակցությամբ մի քանի տող գրելը: Այս ամենը ոչ թե մարդուն փառաբանելու համար է, այլ Երկնավոր Հորը, որի ճամփաները մեր ճամփաները չեն: Մենք օրինված ենք՝ լինելով այս հրաշալի գործի ականատեսը:

Հուշերովս վերադառնում եմ այն ժամանակները, երբ գաղթեցինք Ավստրալիա: Ընդամենը 14 տարեկան էի: Հայրս՝ հովիվ Արքո Գույուճյանը նորեկ էր երկրում: Դժվար օրեր էին. նա պետք է աշխատանք գտներ՝ վեցհոգանոց ընտանիքին խնամելու համար: Նա աշխատեց շատ հայ գաղթականների հետ Զաքսվուդի «Warburton Franki» տեղական գործարանում:

Սի օր հայրիկը տխուր վերադարձավ տուն, քանի որ ճաշի ընդմիջնան ժամանակը ընդամենը 30 րոպե էր, և ինքն առիթ չէր կարողանա գտնել մյուս գործավորներին Քրիստոն մասին պատմելու կամ նրանց հետ խոսելու համար: Մայրս, ով նույնպես սիրում էր Տիրոջը, անմիջապես արձագանքեց՝ ասելով. «Արքո՛, ինչո՞ւ հոդված չես գրում ու չես բաժանում նրանց, որ կարդան»: Այդ օրը հայրիկը մինչև ուշ գիշեր արքուն մնաց՝ հայերենով ամրող Ա4 չափի թղթի վրա իր ձեռագրով Աստծո սիրո և փրկության ճանապարհի մասին գրելով: Հաջորդ օրը դա տվեց աշխատակիցներից մեկին, ով շատ քաղաքացի և ուրախացավ այն ստանալու համար:

Դարձյալ ամբողջ էջ գրեց և հանձնեց մեկ ուրիշին, ով իրեն պատասխանեց՝ ասելով. «Դուք լավ ձեռագիր ունեք, ինչո՞ւ չէք պատճենահանում ձեր գլուխները մարդկանց տալու համար»: Այսպիսով,





հայրիկը 10 օրինակ պատճենահանեց՝ իր գործընկերներին տալու համար: Ծուտով նաև սկսեց փոստով ուղարկել աշխարհով մեկ տարածված մի քանի ընկերների, որոնցից մեկը խորհուրդ տվեց նրան տպագրիչ մեքենայով գրել այն, չնայած որ իր ձեռագիրը գեղեցիկ էր: Հայրիկն ասաց, թե չունի այդպիսի մեքենա և զգիտի՝ որտեղից կարելի է գրնել հայերեն տառերով գրամեքենա: Ի գարման իրեն՝ այս մարդն ուրախությամբ մի գրամեքենա ուղարկեց այս ծառայության համար: Գրամեքենան հասավ հայրիկիս, և զիշերային աշխատանքը քառապատկվեց:

Այո՛, ամեն զիշեր մեր օրորոցայինը այս գրամեքենայի կոճակների հնչյուններն էմ՝ թը՛ք, թը՛ք, թը՛ք..., որոնք հայրս երբեմն մինչև կեսզիշեր մեկ մատով էր հավաքում: Իր մեկէջանոց հոդվածը դարձավ մի փոքրիկ գրքույկ՝ «Ազգարարության փող» վերնագրով: Նա մինչև իր մահը հավատարիմ մնաց իր ծառայությանը:

Նա ամբողջովին հոգաց յուրաքանչյուր ամսվա համար 400 օրինակի համար պահանջվող ծախսերը՝ անձամբ կազմելով թերթը՝ ծախսերը կրճատելու համար: Իր ձեռքով գրում էր բոլոր հասցեները և փոստով ուղարկում 14 երկրներ, ևս 20 օրինակ՝ Խորհրդային Հայաստան:

Հիշում եմ՝ երբ իիվանդ պլառկած էր անկողնում, մեր ճաշասեղանը ամբողջովին հատկացված էր ամսագրին, որը պետք է դասավորվեր, կազմվեր, ծրաբների մեջ դրվեր ու փոստով ուղարկվեր: Բայց նա չէր կարողանում անկողնուց բարձրանալ: Ամեն օր նրա աշքերը սեղանի վրա էին, ուստի նատեցի սեղանի մոտ և սկսեցի թերթերը պատրաստել՝ փոստով ուղարկելու համար:

Մեկ ամիս են գիտեի, որ ժամանակն է ամսագրի նոր տպագության համար, այնպես որ հորս ասացի:

- Հայրիկ, դու շատ հոդվածներ ունես տպագրության համար: Կա-

լո՞ղ ես մի քանի հատ ընտրել, որպեսզի պատրաստեմ տպագրելու:

Նա ասաց.

- Որդի՞ս, ինչպե՞ս ես անելու:

Այդ ժամանակ ACM-ի ծառայությունը արդեն սկսված էր Հայաստանում, և ես ճանաչում էի Ջրիստոսվ Եղբայր Վարդանին: Հարցի նրան, թե արդյոք կարո՞ղ է օգնել այս ամսագրի ծառայության մեջ: Ըստով ձեռքս տպագիր օրինակ ունեի: Հայրս հրճվեց՝ տեսնելով նոր տառատեսակները և վերնագիրը՝ բոլորը ամբողջությամբ նոր տեսրով:

Մենք շատ ենք կարուտում այս մարդուն, ով իր կյանքի 35 տարին նվիրեց, որպեսզի ուրիշները լսեն այս հիմքանչ Փրկչի մասին, որ մահացավ աշխարհի փրկության համար:

Հ. Գ.

Ինչո՞ւ ես ուշանում

Գործք 22:16

Հին դարերից մնացած մի ավանդավեա հետևյալն է պատմում մեզ: Մի անգամ ճգնավորը դեպի անտառ առաջնորդվեց իրեշտակի միջոցով: Այնտեղ մի ծեր մարդու տեսավ, որ կացնով փայտ էր կոտրում: Բավկականաչափ փայտ կտրելուց հետո մարդը հավաքեց լրանք, կապեց և ուզեց շալակն առնի: Սակայն երբ տեսավ, որ բեռք շատ ծանր է, իշեցրեց այն, քանի ու կապոցից մի մաս հանելու փոխարեն գնաց մի քիչ էլ փայտ բերեց և եղածի վրա ավելացրեց: Հետո փորձեց լրանք շալակել: Բայց երբ հասկացավ, որ չի կարողանա տանել ծանրության պատճառով, նորից իշեցրեց այն և գնաց մի քիչ փայտ ևս հավաքեց ու եղածի վրա լրեց: ճգնավորը զարմացավ այս ծեր մարդու հիմնարության վրա ու աղաչեց իրեշտակին, որ լրա պատճառը հասկացնի իրեն:

Հրեշտակն ասաց նրան. «Դու զարմանում ես այս ծերունու արածի վրա, սակայն շատ մեղավորներ ճիշտ նույնն են անում: Նրանք

Երբեմն արթնանում են և որոշում Տիրոջը դառնալ: Սակայն երբ տեսնում են, որ կյանքում շատ բաներ են փոխվելու ու շատ դժվարություններ են հաղթահարելու, անհոգաբար անտեսում են ապաշխարության կարևոր գործը ու սկսում իրենց նախկին մեղքի վրա ուրիշ մեղքեր ավելացնել: Ամեն անգամ, երբ ուզում են ապաշխարել, իրենց մեղքը նախորդից ավելի ծանր են գտնում և մի քիչ էլ հետաձգում են ապաշխարությունը: Նրանք կարծում են, թե ապաշխարությունն ավելի դյուրին է լինելու ապագայում, քան իհմա: Այսպիսով նրանք այնքան են ծանրացնում սեփական բեռը, որ այն կրելն անկարելի է դառնում իրենց համար: Ի վերջո հուսահատված Աստծո ողորմությունից՝ իրենց մեղավոր վիճակով պառկում են, քնում ու մեռնելով դժոխք գնում»:

Հետո հրեշտակն ասաց. «Հիմա դարձիր, այդ ծերունուն նորից նայիր»: Երբ ճգնավորը նայեց, տեսավ, որ կրկին աշխատում էր փայտը վերցնել, քայլ չէր կարողանում, քանի որ չափից ավելի ծանր էր: Նրա տկար ուորերը դրորողում էին, ու մարմնի ուժը պակասում էր: Հանկարծ մահվան ստվերները պատեցին նրան: Նա վերջին ու հուսահատ ճիգն էլ արեց իր ծանր բեռը վերցնելու, սակայն իզուր գետնին լնկավ և իր բեռի տակ հոգին ավանդեց:

Ո՞վ մարդիկ, կանայք և երիտասարդներ, դուք, ապաշխարությունը ու փրկությունը հետաձգելով ու մի քիչ էլ մեղանչելով, ձեր մեղաց բեռն ավելի եք ծանրացնում, ուստի այս մարդուն նայեք: Բուն ձեր պատկերը չե՞ք տեսնում այս մարդու մեջ:

Թեև շատերին կրկին ու կրկին այցելում է Աստծո շնորհքն ու արթնանում են, սակայն անկեղծ դարձ, ճշմարիտ ապաշխարություն և սրտագին զդում չեն ունենում: Մի քիչ փոփոխություն, մի քիչ աղոքք, մի քիչ Սուրբ Գիրք կարդալ, ահա այս է նրանց արածք: Բայց ավաղ, այսպես սատանան չի հաղթվում, մեղքը սրտից չի արտաքսվում, իին մարդը չի մեռնում, ու հոգին չի կարողանում փրկվել: Այսպես հուսահատված, մահվան քնով քնում են և կորչում հավիտյան: Նրանք ուզում են ապաշխարել այն ժամանակ, երբ մահվան անկողնում գտնվեն: Սակայն ցավալի կերպով խարվում են»:

Քաղված

Աստծո տված պարզևները (2)

Ա Կորնթացիներին 12-րդ գլուխ

Ահա Ա Կորնթացիներին 12:4-7-ից քաղված մի քանի անվիճելի փաստ.

Չկա այնպիսի քրիստոնյա, որը Սուրբ Հոգուց առնվազն մեկ պարզ ստացած չլինի:

Դուք Աստծո Սուրբ Հոգու կողմից եկալի և հատուկ պարզ ստացաք: Սուրբ Հոգին, ով զորացրեց Աստծո վաղեմի տղամարդկանց ու կանանց, նոյն Հոգին է, որը ձեզ պարզ շնորհեց:

Քրիստոնյա դառնալու օրը շատ զարմանալի բաներ պատահեցին ձեզ հետ.

- Դուք փրկագնվեցիք Քրիստոսի՝ խաչի վրա կատարած փրկագործությամբ:
- Ձեր մեղքերը ներվեցին:
- Դուք որդեգործեցիք Աստծո ընտանիքում որպես Իր շատ սիրելի զավակ:
- Ձեր մեջ Սուրբ Հոգին բնակվեց և մշտապես կնքվեցիք Իր կնիքով:

Ձեր կյանքի մնացած մասը անցկացնելու եք՝ բացահայտելով այդ օրը կատարվածի բոլոր իրաշալի հետևանքները: Երբ քրիստոնյա դարձաք, Սուրբ Հոգին հիանալի մի պարզ և այն զորավոր կերպով օգտագործելու կարողություն տվեց ձեզ: Քրիստոսի Մարմնում անպիտան անդամներ չկան: Սա նշանակում է, որ հոգևոր պարզ ունենալը բացառիկ քրիստոնյա լինելու նշան չէ, քանի որ բոլոր քրիստոնյաները առնվազն մեկ հոգևոր պարզ ունեն: Թերևս չզգաք, որ Սուրբ Հոգուց հատուկ պարզ ունեք, սակայն ևս մեկ անգամ ուզում եմ շեշտել, որ այս պարզ պայմանավորված չէ ձեր զգացումով, այն հիմնված է Աստծո Խոսքի ճշմարտության վրա:

Կան բազմաթիվ պարզեներ, որոնք ներկայացնում են գործունեության տարրեր ոլորտներ:

Արգենտինայում ձեռքերը կորցրած մի տղամարդու զորակոչեցին բանակ: Այնտեղ նա մոտեցավ իր հրամանատարին ու հարցրեց.

- Ես ի՞նչ օգուտ կարող եմ քերել այստեղ:

Հրամանատարը պատասխանեց.

- Տեսն՞ո՞ւմ ես այնտեղի ջուր բաշող զինվորին, գնա՛ և ասա՛ նրան, իենց դույլը լցվի. նա կույր է:

Պողոսը շարունակում է իր միտքը՝ օգտագործելով մարդու մարմնի լուսաբանումը: Ի՞նչ ընդհանուր կապ կա աչքի ու ոտքի միջև: Դրանք բոլորովին տարրերվում են իրենց տեսքով ու նպատակով և ոչ մի ընդհանուր բան չունեն՝ բացի միմյանց կարիքն ունենալուց: Ոտքը կսայթաքի, եթե աչքը չտեսնի: Աչքը թիւ բան կտեսնի, եթե ոտքը շարժման մեջ չգտնվի: Մարմնի ուժը իր անդամների տարրերությունների և ոչ թե նմանությունների մեջ է: Պարզեների մասին մտածելու ժամանակ մենք պետք է հիշենք, որ իրարից տարրերվում ենք:

Ձեր պարզեւ ձեզ համար չէ, այլ ընդհանուրի շահի համար:

Մարդու մարմնում չկա որևէ անդամ, որը միայն իր շահի համար է գործում: Սա չհասկանալը խոչընդոտ կատեղծի ձեր կյանքում: Աստված ձեզ պարզեւ չի տվել ձեր կարիքը բավարարելու համար: Ձեր պարզեւ ուրիշների համար է: Եթե մտածում եք, թե ձեր ունեցած պարզեւն այնքան էլ հիանալի չէ կամ աննկատելի է, ուրեմն դուք իսկապես դժվարության մեջ եք: Այդպես դուք ձեր պարզեւը բաղում եք այն գործածելու փոխարեն, իսկ ուրիշները զրկվում են ձեր ունեցած պարզեւի օրինություններից: Դուք նաև գուրկ եք մնում Աստծո կողմից ձեզ տրված կարողությունն օգտագործելու ուրախությունից: «Յուրաքանչյուրին առանձին-առանձին բաժանում է, ինչպես Ինքն է կամենում» (Ա Կորնթ. 12:11): Աստված ընտրեց ձեզ տալ այն, ինչ տվել է, և այն ամբողջովին հաճելի է իրեն:

Ոչ մի պարզեւ համընդհանուր չէ

Պողոսը իրական վտանգ տեսավ այն գաղափարախոսության մեջ,

որ կան հատուկ պարզեներ, որոնք յուրաքանչյուր քրիստոնյա պետք է ունենա: Ահա մի հետաքրքիր լուսաբանում:

Ծատ-շատ տարիներ առաջ անտառի կենդանիները որոշեցին, որ պետք է իմաստալից բան ձեռնարկեն աշխարհի խնդիրները լուծելու համար: Այսպիսով, նրանք մի դպրոց հիմնեցին: Կազմեցին ուսումնական տարվա դասացուցակը՝ վազքի, մագլցումի, լողի և թռիչքի դասերի: Դասընթացը ավելի հեշտացնելու համար բոլոր կենդանիները ընտրեցին դասավանդվող բոլոր առարկաները: Բաղը գեռազանց լողաց: Իրականում ավելի լավ լողաց, քան իր հրահանգիչը, բայց թռչելու համար զնահատականները հազիվ թե բավարար էին, իսկ վազքը՝ չափազանց ողորմելի: Զանի որ դանդաղ էր վազքի մեջ, նա ստիպված էր դպրոցի ժամերից հետո մնալ այնտեղ՝ վարժությունը ստվորելու համար: Վազքի վարժությունների պատճառով իր լայն ու տափակ ոտքերը սկսեցին մաշվել, այնպես որ լողի զնահատականները նոյնպես վատթարացան: Հազիվ թե միջին զնահատական կարողացավ ստանալ: Միջինը միանգամայն ընդունելի էր, ուստի ոչ ոք այդ մասին չէր մտահոգված՝ բացի բաղից: Նապաստակը գերազանց ցուցանիշ ունեցավ իր դասարանցիների նըկատմամբ վազքի վարժության մեջ, բայց ուրիշ մկանների խնդիրներ ունեցավ, երբ չափազանց մեծ ջանք բափեց լողալու վարժությունը կատարելու ժամանակ: Ի վերջո, վազելու իր ունակությունը խիստ վատացավ: Սկյուռը հիանալի կերպով ծառը մագլեց, բայց թռչելու մեջ ծախողում գրանցեց: Արծիվը խնդրահարույց աշակերտ էր և կարգապահական խիստ հանդիմանության ենթարկվեց ոչ կառուցողական բնավորություն դրսևորելու համար: Ծառը բարձրանալու վարժանքի ժամանակ նա մյուս կենդանիներին հրմանալով բարձրացավ գագար:

Սիսրը հստակ է.

- Եթե բաղ եք, ուրեմն լողացե՛ք և մոռացե՛ք վազելու մասին:
- Եթե նապաստակ եք, ուրեմն վազե՛ք և մի՛ փորձե՛ք միանալ լողորդների խմբին:
- Եթե սկյուռ եք, ապա բարձրացե՛ք. դուք երբեք չեք կարողանաք թռչել:

- Եթե արծիվ եք, ապա բռչեք. դուք երբեք լավ վազորդ չեք կարող դառնալ:

Ճիշտ սրա մասին է խոսում Հռոմ. 12:6-8-ը: Եթե ձեր պարզեց մարդարեանալն է, ուրեմն մարդարեացեք, եթե ուսուցանելն է, ապա ուսուցանեք, եթե տալն է, ապա տվեք, եթե առաջնորդելն է, ապա առաջնորդեք:

Երբ փորձում ենք լինել այն, ինչ չենք, դանդաղեցնում ենք ու խոշնուում Աստծո՝ մեզ տրամադրած պարզեց գործածությունը: Երբ այդպես է պատահում, մենք ընկնում ենք հիասքափության, հուսահատության և նույնիսկ հանցավորության զգացումի մեջ: Աստված մեզ շտեղծեց այն մտադրությամբ, որ բոլորին նոյն պարզեց տա, այլ որ յուրաքանչյուրին գոնե մեկ պարզեց տա: Արդյոք զգո՞ւմ եք, թե շատ քան չունեք, և ձեր ունեցած պարզեց կարևոր չէ: «Հատկապես մարմնի այն անդամները, որոնք շատ տկար են թվում՝ ավելի հարկավոր են» (հմբ 22): Համարը չի ասում, թե այն անդամները, որոնք ավելի տկար են թվում, ավելի օգտակար են: Այստեղ օգտագործված բառը «հարկավոր» բառն է: «Բոլոր մարմինը, հոդերի միջոցով միացված և միահյուսված, յուրաքանչյուր մասի ներգործուն աշխատանքի չափով, աճում է և կառուցվում սիրո մեջ (Եփես. 4:16):

Աստված ձեզ տվել է շատ ավելին, քան պատկերացնում եք: Աստծո՝ ձեզ տված պարզեց բացահայտումն ու օգտագործումը շատ կարևոր է ողջ քրիստոնեական համայնքի համար:

Ուերս Տիրլավ

* * *

«Որովհետև Տերը Ինքը հրամայական գոչյունով, հրեշտակապետի ձայնով, Աստծո փողով կիշնի երկնքից, և նախ Քրիստոսվ մեռածները հարություն պիտի առնեն. հետո մենք, եթե ողջ մնանք, նրանց հետ միասին պիտի հափշտակվենք ամպերով՝ օդի մեջ Տիրոջը դիմավորելու» (Ա. Թես. 4:16):

Կյանքիդ Ճանապարհի ընտրությունը, ԵԵՌ, թԵՌ լայն

Մատթ. 7:13-14, Բ Օր. 30:16-19

ՊՕր. 30:19-ում Աստված Իսրայելի ժողովրդին պատվիրում է. «... Կյանքն ընտրիր, որ ապրես՝ դու և քո սերունդը»: Աստված Իսրայելի ժողովրդին ընտրություն կատարելու ազատություն շնորհեց: Եթե հնազանդվեին Նրա խոսքերին ու պատվիրանները պահեին, կօրհնվեին, կապրեին, կշատանային ու կժառանգեին այն երկիրը, որ Տերը խոստացել էր տալ նրանց:

Տերը մեզ նույնապես շնորհել է ազատություն, որ ընտրենք կա՞ն հավիտենական կյանքը, կա՞մ կորուստը: Մարդկայնորեն գիտենք, որ ֆիզիկական կյանքը շատ կարևոր է մեզ համար: Եթք որևէ մեկի կյանքը վտանգված է լինում, տեսնում ենք կամ լսում, թե մարդիկ ի՞նչ մեծ ջանքեր են գործադրում և մեծ ծախսեր անում կյանքը փրկելու համար: Միայն հուսահատվածներն են ուզում իրենց կյանքին վերջ տալ անձնասպանությամբ: Միզուցե այսպիսիններից ու մասք անբուժելի հիվանդության զոհ են դարձել կամ էլ նյութական մեծ կորուստ են ունեցել:

Կյանքը շատ կարևոր է բոլորին համար: Լուրերով միշտ լսում ենք, թե ինչպես են մարդիկ ջանք թափում կորածներին գտնելու համար:

Սի մայր կորցրել էր իր փոքրիկ տղային: Տասնյակ խմբեր, փրն-սլքութութիւն դրիս գալով, մեկ օր անց նրան իր շնիկի հետ սառած էին գտել: Ի՞նչ ուրախություն տիրեց այդ ընտանիքում, եթք տղան և իր շնիկը վերագտան իրենց կյանքը: Գրեթե մեկուկես տարեկան ուրիշ մի մասուկ խաղալու ժամանակ պատահաքար ընկել էր նեղ ու խոր հորի մեջ: Հարյուրավոր մարդիկ փութացին տարբեր մեքենաներով օգնության հասնել՝ ազատելու մասուկի կյանքը: Նրա կյանքի փրկագինը մոտավորապես 250,000 դոլար արժեք: Ժամեր անց նրան ազատեցին, և մեծ ուրախություն տիրեց նրա ընտանիքում:

Եթե այս մահկանացու ֆիզիկական կյանքն այսքան կարևոր է, ապա որքա՞ն կարևոր է մեր հոգևոր կյանքը: Եթե մարդիկ ջանում են իրենց լավագույնն անել ֆիզիկական կյանքը ազատելու համար, որքա՞ն ավելին պետք է անենք մեր հոգևոր կյանքը ողջ պահելու համար: Աստված ասել է. «Ուզո՞ւմ ես ապրել, կյանքն ընտրիր»: Այս աշխարհի կյանքը որքան էլ երկար ապրենք, մի օր մահանալու ենք: Աստված թե՛ Հին, թե՛ Նոր Կտակարանում ասել է մեզ, որ երկրային կյանքը կարծ է, բայց հավիտենական կյանք կա, որ անվերջ ու անսահման է: Ուրեմն այս աշխարհի վրա մեր կայացրած որոշմանք որոշվելու է, թե որտեղ ենք անցկացնելու հավիտենականությունը: Պետք է որոշում կայացնենք. թե ո՞ր ճանապարհով ենք գնալու՝ նե՞ղ, թե՞ լայն:

Միսուրիի Միսիսիպի գետին նայելիս տեսմում եմ, որ եթե մեկը լողալ ուզի հոսանքի ուղղությամբ, ջանք գործադրելու կարիք չի ունենա. հոսանքն ինքնարերաբար կտանի նրան, բայց դեպի ո՞ւր. դեպի մերքն: Իսկ եթե ջանա հոսանքին հակառակ լողալ, պետք է պայքարի, պետք է օգտագործի ամբողջ ուժը, որ առաջ գնա: Հոսանքի հետ ընթանալը շատ դյուրին է, սակայն Հիսուսն ասել է. «Նե՛ն դրսից մտեր»: Քանի դեռ այս աշխարհի վրա ենք ապրում, հոգսի, նեղության, տառապանքի պակաս չի լինի, սակայն Տերը խոստացել է մեզ հետ լինել: Եթե ուզում ենք, որ Հիսուսն օգնի մեզ, պետք է կատարենք Նրա Խոսքը: Աստծո Խոսքն իմանալը լավ է, բայց բավարար չէ. պետք է կատարենք այն: Միսուրիից նշանավոր գրող Մարկ Սվենն ասել է. «Ես չեմ վախենում Սուրբ Գրքում գրված այն գրվածքներից, որոնք չգիտեմ, բայց վախենում եմ, եթե չեմ կատարում այն, ինչը գիտեմ»:

Աստված Բ Օր. 30:19-ում ասել է. «Կյանքը և մահը, օրհնությունն ու անեծքը ձեր առջև դրեցի. ուրեմն կյանքն ընտիր, որ ապրես դու և քո սերունդը»: Դու անձամբ պետք է կայացնես այդ որոշումը քո անձի համար, ոչ ուրիշը, և երբ ճիշտ որոշում կայացնես, ոչ միայն ինքդ կօրհնվես, այլև ընտանիքդ ու պարագաներդ:

Ծնողները պետք է բարի օրինակ լինեն իրենց զավակների համար՝ Տիրող ճանապարհը ընտրելով, իրենց հավատքի հիմքը հաս-

տատուն վեմի վրա դնելով, որպեսզի կյանքի փոքրիկներից ազդվելով՝ չփլվեն: Տներ են փլվում փոքրիկներից կամ անձրևներից, քանի որ հաստատ իմք չունեն. նոյնը ասվում է մեզ Մատք. 7:24-27-ում: Երկու տեսակի տներ կան. մեկը կառուցված է հաստատուն ժայռի վրա, մյուսը՝ ավազի: Տուն կառուցելիս իմքը կարևոր է: Եթե իմքը ամուր չէ, փոքրիկը, անձրևը փլում է տունը, ու մեծ կործանում է լինում: Իսկ եթե տունը հաստատուն իմք ունի, ժայռի վրա է, ինչ փոքրիկ էլ գա, այն չի սասանվի, այլ հաստատ ու կանգուն կմնա: Սա վերաբերում է նաև մեր հավիտենական կյանքին: Եթե մեր իմքը ժայռի՝ Հիսուս Քրիստոսի վրա է, և մեր հավատքի մեջ հաստատ ենք, ինչ էլ պատահի, գիտենք, որ մեզ համար բարի է: Շատերը լայն ու դյուրին ճանապարհով են քայլում, բայց վերջը հավիտենական կորուստ է: Քչերն են նեղ ճանապարհով գնում, սակայն նրանք կյանք են գտնելու:

Աստված ընտրություն կատարելու ազատություն է տվել մեզ: Աղոթքս է, որ Տերը բոլորիս առաջնորդի, որ հաստատ իմանամք. թե որ ճանապարհով ենք քայլում: Պողոս առաքյալը Կողոսայի եղբայրներին ասել է. «Բարևում են ձեզ սիրելի Դուկաս բժիշկը և Դեմասը», և ուրիշ անգամ ասել է. «Դեմասն ինձ քողեց և այս աշխարհը սիրեց ու գնաց Թեսաղոնիկե»: Եթե կայացրել ես Քրիստոսի հետ քայլելու որոշումը, վստահ եղիր, որ Նա քեզ հետ է քայլելու, մինչև որ հասնես այդ օրինյալ վայրը:

Վեր.՝ Դավիթ Դոկտորյան
Քաղված՝ «Հատրների հոգևոր պատգամներ» գրքից

«Զնալած ոչ տեղը, ուր Աստված է, ոչ էլ արտաքին տեսքը, որ Նա ունի, չգիտենք և չենք տեսնում, սակայն Նրան ճանաչում ենք իր գործերով: Նույնը կարելի է ասել և՝ աստվածային Հոգու, և՝ մարդկային հոգու մասին, որի ոչ տեղը, թե որտեղ է բնակվում, ոչ ուրվագիծը, որ նա ունի, չգիտենք և չենք տեսնում, սակայն նրա գործելակերպով եզրակացնում ենք, որ նա կա՝ առանց որէ շփոթի, պարզ, մասերի չբաժանվող, չանհետացող և մշտապես ապրող՝ որպես Աստծոն պարզեն»:

Ա. Դմիտրի

Աստվածահաճո կանայք

Աստվածաշունչը լի է աստվածահաճո կանանց օրինակներով: Նրանցից կարող ենք թվարկել հավատքի կին Սառային, համարձակ Մարիամին, Սամուելի աղոռող ու նվիրված մայր Աննային, առաքինի Հռութին, Սարեկբայի հնազանդ այրիին, ով իր վերջին կերակուրը տվեց Եղիա մարգարեին, խիզախ Եսթերին, երիտասարդ իրեա Մարիամին, որին Աստված ընտրեց մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի մայրը դառնալու, վերափոխված Մարիամ Մագդաղենացուն, Տիրոց հետևող կանանց, ովքեր ծառայեցին Նրան և Նրա աշակերտներին՝ նրանց համար կերակուր պատրաստելով, նրանց հագուստները լվանալով, սեր ցուցաբերելով... գործարար Այծեմնիկին և պտղաբեր Պրիսկեին:

Այս կանանց իրար հետ կապող ընդհանուր գործոն կա: Դա իրենց ազգային պատկանելությունը, տարիքը, հարստությունը, առողջությունը, դիմքը, խելքը, ամուսնական կարգավիճակը կամ գեղեցկությունը չե, այլ իրենց սիրած ու պաշտած Աստվածն է, որին ճանաչում էին, հնազանդվում ու ծառայում:

Համոզված եմ, որ Մարկոս 12:41-44-ի աղքատ որքևայրու՝ Աստծո հանդեպ ցուցաբերած զոհաբերական նվիրատվությունից ու խոնարհությունից շատ բան ունենք ստվորելու:

«... Հիսուսը գանձանակի մոտ նստած դիտում էր, թե ինչպես է ժողովուրդը դրամ զցում գանձանակի մեջ: Եվ շատերը, որ հարուստ էին, շատ էին զցում: Եվ մի աղքատ որքևայրի եկավ ու երկու լուսա զցեց, որը մեկ գրոշ է: Նա աշակերտներին կանչեց Իր մոտ և ասաց նրանց. «Ծննդարիտ եմ ասում ձեզ, որ այս աղքատ որքևայրին ավելի շատ զցեց գանձանակի մեջ, քան մյուս բոլոր զցողները. որովհետև բոլորն էլ իրենց ավելցուկից զցեցին, մինչդեռ սա, իր չքավոր վիճակում, զցեց իր բոլոր ունեցածը՝ իր ամբողջ ապրուստը»» (Մարկոս 12:41-44):

«Հիսուս գանձանակի մոտ» նստեց: Նա շատ բան գիտեր կանանց

գավթում գտնվող շեփորածել գանձանակների մասին, որտեղ գցում էին տաճարի համար նվիրաբերվող ընծաները: «Եվ շատերը, որ հարուստ էին, շատ էին գցում... իրենց ավելցուկից»: «Աղքատ որբեայրին... իր չքավոր վիճակում, զցեց իր բոլոր ունեցածը՝ իր ամբողջ ապրուստը»: Երկու լուման օրավարձի մեկ երեսուներորդն էր: Զարմանալի չէ, որ Մարկոսը նրան նկարագրում է որպես «մի աղքատ որբեայրի»:

Եթե ինձ թույլ տաք օգտագործել երևակայությունս, ապա պատկերը հետևյալն է. թե՛ հարուստների, թե՛ աղքատների նվիրաբերած ընծաները շեփորի պես գանձանակի մեջ բարձր ձայն էին հնչեցնում: Տեր Հիսուսը զիտեր ձայնի տարբերությունը: Պատմության համատեքստում հարուստ մարդկանց ընծաների ձայնը նման էր «ձայն տվող պղնձի կամ հնչող ծննդաների», բայց որբեայրու երկու լումայի արձակած հնչյունը ազդարարության փողի ձայնի նման հնչեց մեր Տիրոց ականջներին: Նա Իր աշակերտներին բացատրեց, որ կնոջ արածն Աստծուն նվիրված լինելու ու խոնարի սրտի ապացույցն էր:

Թո՞ղ որ մեր օրինյալ Փրկիչը լսի մեր երկու լումայի՝ զոհաբերության. խոնարհության և Աստծո հանդեպ նվիրվածության արձակած ձայնը ու հաստատի, որ այն հաճելի է Իր ականջներին:

Ուոքերտ Հոլոու

* * *